

ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 331
ԱԻԵՏԱՐԱՆ
(Հայերեն և հայատառ տաճկերեն)

Թերթերը՝ 319 (թ. 141Ա+318)։—**Պրակները**՝ 27, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԻԱ՝ 8, ԺԲ և ԺԷ՝ 10, երեք թերթ էլ ձեռագրի սկզբում կա։—**Մեծությունը**՝ 22,5×16,5×4,4 սմ.։—**Նյութը**՝ դեղնած դիմացկուն թուղթ։—**Կազմը**՝ կաշեպատ ստվարաթուղթ, որի վրա ճնշումով ոսկեգույն զարդեր և երկու խաչ կա։—**Պահպանակները**՝ սկզբում կա մի թերթ գունավոր թուղթ։—**Վիճակը**՝ լավ։—**Գրությունը**՝ երկսյուն։ Առաջին սյունակը գրված է հայերեն, իսկ երկրորդը՝ հայատառ տաճկերեն։—**Դատարկ թղթերը**՝ 1ա—3բ, 85բ, 86ա, 141Ա-ա, 141Ա-բ, 142ա, 235ա, 309ա—318բ։—**Տողերը**՝ 30։—**Գծումներ**՝ չկան։—**Գիրը**՝ նոտրգիր։—**Զարդագրություն**՝ ձեռագիրն ունի գեղեցիկ մանրանկարչություն։ Կան երեք ավետարանիչների մեկ էջանոց մեծ նկարները (թթ. 86բ, 142բ և 235բ), ինչպես նաև չորս խորաններ (թթ. 4ա, 87ա, 143ա և 236ա)։ Ձեռագրում կան Հիսուսի, Աստվածամոր, առաքյալների, մոգերի, սրբերի և հրեշտակների բազմաթիվ նկարներ։ Կան բազմաթիվ փոքրիկ նըկարներ Հիսուսի կյանքից։ Ձեռագիրն ունի բազմաթիվ սիրուն լուսանցազարդեր, թռչնագրեր և զարդագրեր, ծառեր և ծաղիկներ, բույսեր և կենդանիներ, զարդեր և տաճարներ։—**Գրիչը և ծաղկողը**՝ էնկուրցի (Անգարա) Սաւակ։—**Պատվիրատուն**՝ մաւետեսի Գեորգ, որդի մաւետեսի Սեֆերի։—**Ժամանակը**՝ 1728 թ.։—**Վայրը**՝ աննշան։—**Ծանոթություն**՝ ձեռագիրը նվեր է ստացվել Ռումինիայից։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 307բ.—Շնորհօք և ողորմութեամբ ամենասուրբ Երրորդութեան, Հօր ամենակալի, Որդւոյ մարդասիրի, և Հոգւոյն սրբոյ ճշմարտի. Աստուծոյ կենդանւոյ և յաւիտենականի։ Եւ բարէխօսութեամբ ամենամաքուր և ամենաւրհնեցեալ միշտ Կուսին (թ. 308ա) Մարիամու Աստուածածնի, և միջնորդութեամբ Սըրբոյ Հօր մերոյ Գրիգորի Լուսաւորչին, և ամենից սըրբոց. աւարտեցաւ ի սուրբ Աւետարանն Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ, յամի ներ մարդեղութեամբ Փրկչին ՌՉԻԸ (1728 թ.—Ն. Մ.) և ըստ հայոց ՌՃՀԷ (1728 թ.—Ն. Մ.) ամսեանն փետրվարի Ա։ Եւ ես յետնեալս ամենեցուն տրուպ և անարժան Էնկուրցի Սաւակ որ և պատկերաբան կոչի սա գրեաց զսուրբ Աւետարանս զայս։ Ով որ ընթերնու զաւետարանս զայս եթէ ունիցի սղալ ինչ ներումն շնորհեցէք, ոչ թէ գիտութեամբ արարի, այլ անգիտութեամբ իմով։ Արդ աղաչեմ զձեզ ով Քրիստոսի անբիծ արեամբն գնեալք հաւատարիմք ճշմարտասէրք եղբայրք, յորժամ ընթերնուք զսուրբ Աւետարանս զայս յիշեսջիք զիս միով Հայրմերիւ և դուք յիշեալք լիջիք աճեղ ատենի Քրիստոսի և զձեզ արժանի արասցէ, լսել զայն աստուածային բարբառոյ որ ասէ. էկ ազնիւ ծառայ բարի և հաւատարիմ, մուտ ուրախութիւն տեառն քո, այս եղիցի եղիցի ամէն։

Եւ դարձեալ գիտելի է զպատճառն գրելութեան զսուրբ աւետարանս կրկին լեզուաւ, այսինքն հայերեն և տաճկերեն, ոմն բարեսիրի այսինքն մաւետեսի Սէֆէրի որդի մաւետեսի Գէորքն, ի բազմաց ժամանակաց ցանկայր և խնդրէր. (թ. 308բ) յետոյ եհաս զցանկացեալն իւր և կատարեցաւ առ նա անսուտ խոստմանցն Քրիստոսի, որ ասէ, և որ խնդրէ առնու,

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի №№ Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի №№ Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի №№ Գ-ից և Է—Ը-ից։

և որ հայցէ գտանէ: Արդ սիրելի եղբայրք եթէ կամիք ընթերնուլ զայն աստուածային գիրքն, յիշեսջիք զվերոյ յիշեալք մաճտեսի Գէորգն և իւր ծնօղացն նորին, և եղբարց և ազգականաց և բարեկամն ամենեցուն. միով Հայրմերիւ և ողջոյնիւ: Եւ դուք յիշեալք լիջիք առաջի ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր, և Որդւոյ, և Ոգւոյն սրբոյ, յաւիտեանս յաւիտենից, Ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ. 2ա.— Aceasta Carte este o suvenira lasate de Tatal meu Mardiros Karakasch care si dansu o avea dela Tatal seu, doresc ca si copii mei se o pastreze ca un semn de aducere aminte, si sesi noteze la randul lor progenitura lor in acesta carte ca se ramaie ca o relique familiara Eu am fort nascut in Iasi in Dechemine 1849.—Recomand urmasilor mei Jubirea Parintilor Bunele Moravun in Societate Ajutorul celor slabi si „Onestitatea“

St. Karakasch

Bucuresti, August 1890.

Թ. 2բ.—1821 մայիսն:

Թ. 3ա.—1482 թիւ: 1821 յունուսին 2:

Թ. 309ա.—Թվին ՌՄՃԷ-ին (1808 թ.—Ն. Մ.) թըվայական յայօց օքօսթօսի ամսուն ԺԵ-ին պէն Րուշճուքլու Քարաքաշ օղլու Մաթօս պու ավէտարանըս ընդամպօլտայ ալտըմ Քարաքաշ օղլու Հաճի Կարայպէտ աղայ իչին ճէր հաչւն քի պիր գիրիհաթօնեայ քարտաշընմըզ օյքուրսայ կէչմիշլէրինէ պիր օղօրմիս օյքուսուն Աստուած օղօրմի ննչէձէյօց յօյքուն:

Թ. 316բ.—1825 Մարտ 10-ինտէ:

Պիլնիզ օլայսընըզ պու թարիհթէն չունթու պալուշուն էլմէսի վար ալաճ րահմէթ էլէսին ճանընայ, նուր հնսին քէրէզմանընայ, քուլումուզ ֆիլան ֆիլանեանց, պէճանէ:

Թ. 317բ.—1825 Մարթըն 10-ինտէ Եաշու պիլմիշօզասընընզքիյ պու թարիհթէն չունթուպալուշ օլտու ալլահ րահմէթ էլէսընն ճանընայ: Պէնզէյիյ քուլումուզ Պէտրոս Քարաքաշեանց:

1825 մարտ 10-ինտէ Եաշ պիլմիշ օլասնզ պու թարիհթէն չունթու պալուշ օլտու ալլահ րահմէթ էլէսին ճանընայ, պէնտէյի քուլումուզ ալլահն եարաթընդընայ:

Թ. 318բ.—1822 հնվեր. 15 Պօթուշան: Ես էկիլ իմ Անքօզէն հօս ու քարթացիլ իմ այս քիրքըս: Մհի. Մարգիա Քարքաշ.: Ինէմ մալէմի օլօսուն...

1825 երպիսիէ 24-ինտէ ի Եաշ:

Ես էկիլ իմ Պօտշանէն հօս, կարդացիլ իմ այս քիրքըս: Ավէտիս Քարաքաշեան:

№ 382
ԱԻԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 274:—**Պրակները՝** 22, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԺԷ՝ 10, Բ՝ 11, ԺԵ՝ 14: Հավելվածական մի պրակ էլ ձեռագրի սկզբում կա, բաղկացած 10 թերթից:—**Մեծությունը՝** 19×14,5×4,2 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած բարակ դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով ոսկեգույն զարդեր են նկարված:—**Պահպանակները՝** սկզբում և վերջում մետաքսյա սպիտակ հասարակ թուղթ:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թղթերը՝** 2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ և 14ա:—**Տողերը՝** 23:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի գեղեցիկ մանրանկարչություն: Կան չորս ավետարանիչների մեծածավալ նկարները (թթ. 14բ, 86բ, 135բ և 214բ), ինչպես նաև բազմաթիվ խորանաձեր (թթ. 1բ, 2ա, 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա, 15ա, 87ա, 136ա և 215ա): Բացի այդ ձեռագրում կան բազմաթիվ թոչնագրեր և զարդագրեր, ինչպես նաև մեկական հրեշտակագիր (15ա), գազանագիր (87ա) և կենդանագիր (136ա): Մատյանն ունի բազմաթիվ սիրուն լուսանցազարդեր և գմբեթներ, սրբեր և հրեշտակներ, ծառեր և ծաղիկներ, մարդիկ և կանայք, կապիկներ և գազաններ, թռչուններ և բույսեր:—**Գրիչը՝** Նիկողոս քահանա:—**Պատվիրատուն՝** Հեոթաճյացի ոսկերիչ Հարություն:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1646 թ.:—**Վայրը՝** Կոստանդնուպոլիս (Ստամբուլ):—**Մանոթություն՝** Վաշինգտոնաբնակ Տիկին Նվարդ Մերտինյանը սույն ձեռագիրը նվիրել է Մայր Աթոռի Ձեռագրատանը 1969 թ. հոկտեմբերի 6-ին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 132ա.—Համբարձմանն կարդայ զսայ:

Թ. 214ա.—Աւրհնութիւն որ կարդայ, գովութիւն որ լսէ, փառք տուողին և յիշատակ գրչիս, ամէն:

Թ. 278ա.—Փառք անսկիզբն անեղին և անմահին և անսահման էացուցչին ի բոլոր էիցս հաճոյք աւրհնութիւն և փառք Հաւր և որդոյ և հոգւոյն սրբոյ: Իսկէ չորից աւետարանչաց խորհուրդ բազմաւրինակիմն տեսանի, իբր չորք անկիւնս արարածոցս աշխարհիս և իբր մշտահոս չորս գետս յադենականս, և այլ նման չորից կենդանեաց ըստ տեսլեան Եզէկիէլի, այլ և նմ(թ. 278բ)ան նիւթից չորից զգալի տարրաց, որ շարմանեալ միութեամբ զգալեաւ միջնորդութեամբ, հոգի ընկալութեամբ կենդանի մարդ բանական ցուցեալ, սոյնպէս չորս աւետարանչացս միաբան հոգէկրութեամբ Հոգովն սրբով զբանն աստուածային զմարդեղութեանն յայտնեալ ծանուցին կենդանութիւն ամենայն աշխարհի, ըստ այնմ ես իսկ եմ յարութիւն և կեանք և որ հաւատայ յիս մի մեռցի յաւիտեան: Այսպէս յաւէտ կենդանութիւն աւետարանելով աւետարան կոչեցաւ սուրբ գիրքս այս: Արդ գրեցաւ սայ ի թուաբերութիւն Հայոց ՌՂԵ (1646 թ.—Ն. Մ.) ի քաղաքն Ստամբաւլ, ի դուռն Սուրբ Նիկողայոսի, ձեռամբն անարուեստ և անիմաց գրչի Նիկողոս լոկ անուամբ երիցու ի վայելումն անձին իւրոյ: Արդ աղաչեմ զամենեսեան որ հանդիպիք սմա, յիշեցէք աղաւթս ձեր զծնաւղս իմ և զերախտաւոր վարդապետն իմ, որ բազում երախտիք և աշխատանք ունի ի վերայ իմ: Այլև ստացող սորա յի-

շեցէք (թ. 274ա) Քեաւթաճեացի ոսկերիչ Ցարութիւն գրել տալու զսուրբ աւետարանս իւր հոգոյն ի հալալ ընչից և ի յարդար վաստակոց, և հարց Յովաննէսի հոգուն. և մարց Հռիփսիմէնի. և եղբարց Շեհրիին և միւս եղբարց Տէր Նիկողոսին, և որդոցն իւրոց դեռաբուսկաց Յեսայիին, Յովաննէսին, Շեհրիին և Մարիամին, որ ի միում ամսի հանգեան ի Քրիստոս ի Տէր մեր ի թվին հայոց ՌՂԶ (1647 թ.—Ն. Մ.) որք հանդիպիք սուրբ աւետարանիս կարդալով կամ աւրինակելով յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զվերոյգրեալսն և Աստուած ողորմի ասացէք որ և ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի Քրիստոս Աստուած ի միւս անգամ գալըստեանն իւրոյ, և նմայ փառք և երկրպագութիւն ընդ Հաւր և Սուրբ Հոգոյն այժմ և միշտ և յաւտիեանս յաւիտենից ամէն:

Հայր մեր որ յերկ.: Դարձեալ յիշեցէք զստացող սուրբ աւետարանիս զՔեաւթաճեացի ոսկերիչ Ցարութիւնն, որ փափաքանաք ետ գր(թ. 274բ)ել զսուրբ աւետարանս ձեռամբ եղբարն իւրոյ՝ Նիկողայոս երիցու, յիշատակ իւր և հողակցին, և որդոցն և ծնաւղացն իւրոց, և ամենայն առու արեան մերձաւորաց իւրոց կենդանեաց և հանգուցելոց ի Քրիստոս Աստուած, և ետ ի ձեռս եղբարն իւրոյ Նիկողայոս քահանային, որքան կենդանի է առ ինքն մնասցէ, և յետոյ որդոյն իւրոյ թէ քահանայ լիցի և թէ ոչ լիցի տացեն ի Սուրբ Նիկողայոս եկեղեցին, և մնասցէ անդ անջինջ յիշատակ, եթէ ոք յանդգնի ծախէ կամ գրաւէ զմասն Յուդայի առցէ և զպատիժն կայենի առ և ի հանդերձելումն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 274բ.—1647:

(Վերջին պահպանակի վրա) Հոկտ. 6, 1969 Երեվան:

Բնիկ իսթանպուլահայ Նուարդ Մերտինեանի կողմէ կը նուիրուի սոյն Աւետարանը Քրիստոսի. զորս իր 1968 Ուաշինկթընէն Իսթանպուլ ճամբորդութեան ընթացքին և օրերուս մէջ 22 Սեպտ.ին գեղեցիկ դիպուած մը դէմը հանեց գրավաճառ Ց. Աբրահամեանի գրատունէն:

Հանդիպումը Աստուածային էր, տրուած ըլլալով Հոկտ. 5-ին Ս. Միւռոնի օրհնութեան կը զուգադիպէր, և երէկ ներկայ եղանք այդ նուիրական հանդիսութեան:

Սոյն գրչագիր Աւետարանը սրտագին նուէր մըն է Ս. Մեսրոպ Մաշտոց թանգարանին:

Նուարդ Մերտինեան

(Շարունակելի)